Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձոր մարզի Գլաձոր համայնքի ղեկավարի

2015թ. մարտի 19-ին ժամը 15:00-ին Գլաձոր համայնքում տեղի ունեցավ գյուղապետի հանդիպում համայնքի բնակիչների հետ, որտեղ ներկայացվեց 2014թ-ի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

Ներկայացվում է հաշվետվության համառոտ շարադրանքը

Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքով սահմանված լիազորություններին համապատասխան՝ Գլաձորի գյուղական համայնքում իրականացվել են սոցիալ- տնտեսական զարգացման հետևյալ աշխատանքները՝

1. Խմելու ջրի համակարգում հիմնովին վերանորոգվել է մոտ 50 գծամետր խողովակաշար:

2. Համայնքում սիստեմատիկ կերպով կատարվել են աղբահանության աշխատանքներ:

3. ՀՍՀ ծրագրի միջոցով սկսվել և ավարտվել են համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները: 2014թ. ապրիլի 1-ի դրությամբ մանկապարտեզը շահագործվել է:

Համայնքը ձեռք է բերել 100 երեխայի համար 5 մլն. դրամի չափով համապատասխան գույք:

4. Մաքրվել է 4-5 կմ ոռոգման ջրի առու և կառուցվել է 260 մ ոռոգման ցանց:

5. Համայնքի կենտրոնական փողոցով՝ 1,6 կմ երկարությամբ, անցկացվել է գիշերային լուսավորություն:

6. Խճապատվել են համայնքի թվով 3 փողոցներ:

7. Համայնքի 33 փ 3-րդ փակուղու և 26-րդ փողոցի միջև հետիոտնի անցուդարձի համար կառուցվել է կամուրջ:

8. 2014թ. կայացվել է ավագանու 7 նիստ, ընդունվել՝ 36 որոշում:

9. Բնակիչներից ստացվել է 78 դիմում:

10. Կայացվել է գյուղապետի 66 որոշում, այդ թվում համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին դրամական օգնություն տալու մասին և տրվել է 2.500 մլն դրամ ֆինանսական օգնություն:

11. Համայնքի ղեկավարի կողմից կատարվել է բնակիչների ընդունելություն, լսվել է նրանց պահանջները և տրվել համապատասխան ընթացք:

12. Համայնքում կազմակերպվել է սանիտարական միամսյակ. մաքրվել է համայնքի վարչական տարածքում գտնվող Մեծ հայրենական պատերազմում զոհվածների և պատմամշակութային հուշարձանների շրջակայքը:

13. Համայնքի 2014թ. բյուջեն կատարվել է հետևյալ տեսքով՝

Հողի հարկ՝ 104%

Գույքահարկ՝ 102%

Տեղական տուրքեր՝ 102%

Վարձավճարներ՝ 99%

Համայնքի բնակիչների անունից խնդրում ենք Վայոց ձորի մարզպետ պարոն Հ. Սարգսյանին աջակցելու՝

1 - Համայնքի միջնակարգ դպրոցի և մշակույթի տան վերանորոգումն իրականացնելու

2 – Ճահճացված 5 հա տնամերձի և 15 հա սեփականաշնորհված հողերի համար համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու

3 - Համայնքի որոշ թաղամասերում կոյուղի կառուցելու

Գյուղապետ՝ Ա. Մարտիրոսյան